Պ

ՊԵՏՐՈՍ ԵՈՒՍՈՒՖԵԱՆ, ԶՄԻՒՌՆԻՍՑԻ.— Պօղոս պէյ Եուսուֆի (✻ 1843) եղբայրն էր, 1780ին Թրիէստի մէջ կը վարէր Եգիպտոսի փոխարքային սեղանաւորութիւնը և գործակալութիւնը։ Պետրոս Եուսուֆեան՝ Զաքարիա եպս.ի (յետոյ պտրք.) թելադրութեամբ 1834ին Ս. Յակոբի վանքին կը նուիրէ փայտեայ մամուլ մը կապարեայ գիրերով և գործիքներով (Ակնարկ. էջ 16)։ Նպաստած է նաև Ս. Էջմիածնի հիւրանոցի նորոգութեան և Զմիւռնիոյ Ազգ. վարժարանին. վախճանած է 1846ին Կորինթայի մէջ։

ՊՕՂՈՍ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ, ԱՐԱՊԿԻՐՑԻ.— Փոքր հասակին Գահիրէ գացած է իր ազգականներուն մօտ, ուսած է արաբերէն. նախ մառանապետ կը կարգուի Եգիպտոսի փոխարքային և յետոյ կը հաստատէ սեղանաւորական տուն մը Գահիրէի մէջ. Արաբկիրի մէջ հիմնած է վարժարան մը որ 1895ի դէպքերուն հրոյ ճարակ եղած է։ Կարապետեան Զէյթունի և ուրիշ տեղերու ալ ի նպաստ բարեգործութիւններ ըրած է։

Յիշեալը թողած է նաև կտակագիր մը 1893 Ապր. 13 թուականով, որ 1894 Օգոստոս 10ին հաստատուած է ռուսական հիւպատոսարանէն։ Պօղոս Կարապետեան նոյն կտակագիրին համաձայն, Եգիպտոսի Կիզէ և Կալուպիէ նահանգներուն մէջ ունեցած 66 ֆէտտան մշակեալ հողերը կտակած է Արաբկիրու և Գահիրէի Ազգ. վարժարաններուն, ինչպէս նաև Երուսաղէմի Ս. Յակոբի վանքին, պայմանաւ որ իր արական սեռի ժառանգորդները յաջորդաբար մատակարարեն այդ հողերը և զուտ արդիւնքը բաժնեն նոյն երեք հաստատութիւններուն, հետևեալ համեմատութեամբ, %45ը Արաբկիրի, 30ը Գահիրէի և 25ը Երուսաղէմի Ս. Յակոբի վանքին։ Վանքը ամէն տարի կանոնաւորապէս կը գանձէ իր բաժինը։

Ս

ՍՈՂՈՄՈՆ ՊԱՊԷ ԹԻՖԼԻՍՑԻ.— Մասնաւոր կտակագիրով իր ստացուածքը կը կտակէ իր ժառանգորդներուն, Ս. Յակոբի